«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2012թ.

Ուսումնական պլանի նորմատիվներում և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի գործոնների կշիռներում փոփոխություններ կատարելու մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական պլանի նորմատիվներում և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի գործոնների կշիռներում փոփոխություններ կատարելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան), գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Քննությամբ ավարտվող մոդուլների համար «ուսանողի անհատական աշխատանք» գործոնի կշիռն ավելացնել «ընթացիկ ակտիվություն» գործոնի կշռին, այսինքն՝
   ընթացիկ ակտիվություն՝ 30,
   միջանկյալ ստուգում՝ 30,
   ամփոփիչ ստուգում՝ 40:
2. Ստուգարքով ավարտվող մոդուլների համար հաստատել գործոնների հետևյալ կշիռները՝
   ընթացիկ ակտիվություն՝ 60,
   ամփոփիչ ստուգում՝ 40:
3. 8-րդ կիսամյակի քննությամբ ավարտվող մասնագիտացման մոդուլներից մեկը տեղափոխել 6-րդ կիսամյակ՝ ուսումնական փորձառության փոխարեն և դրա համար հատկացնել 4 կրեդիտ, իսկ մյուսն ավելացնել ընտրովի դասընթացներին:
4. Ընդլայնել ընտրովի դասընթացների ցանկն այնպես, որ ուսանողները հնարավորություն ունենան ընտրելու մեկից ավելի դասընթաց:
5. Ավելացնել պետական քննության կրեդիտը՝ 9-ը:
6. Ուսումնական և արտադրական փորձառությունները կազմակերպել 8-րդ կիսամյակում (12 կրեդիտ)՝ փետրվարի 9-ից, 8 շաբաթ տևողությամբ:
7. Առկա ուսուցման բակալավրիատում յուրաքանչյուր կիսամյակում քննությունների առավելագույն քանակը սահմանել 5-ը:
8. Մագիստրատուրայում հանել պետական քննությունը:
9. Հեռակա ուսուցման համակարգում հանել «ընթացիկ ակտիվություն» գործոնը: Գիտելիքների ստուգումները կազմակերպել բանավոր՝ գրավորի փոխարեն, գնահատումն իրականացնել 100 միավորային համակարգով:
10. Հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերում հանել ստուգողական աշխատանքները:
11. Երկու շաբաթվա ընթացքում համապատասխան փոփոխություններ կատարել ուսումնական պլաններում:
12. Որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

28.03.2012թ.